



## Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Ս

### ՏԱՐԵ՛Ք ԶԻՍ...

Անապատին խորը, ավազին վրա, խարխուլ մի տնակի մեջ, սիրտ մը տարադիր հայու, խորշակեն արևահար, անկողին գամված կտքաւ: Խորճիթին նման՝ մարմինը վտիտ, կտրծքն է հյուծած: Հայ մարտիրոսութենէ հրաշքով փրկված՝ օտար երկիրքի տակ: Սիրտն է աշուն, հոգին ձմեռ, թշուառ էակ: Պանդուխտ, կերեակայէ հայրենի տեսարանները, լճակ ու աղբյուրներ, զեփուտը դարնան մեղմ, փառքը երեկի, վերելք այսօրվան: Աշուղի շունչով, վարդապետի կերպէ երգ սիրանվագ, երգ Հայրենիքի, ուր մարդոց հոգին թէ առած վթռչի անհունը:

Մի օր դացի ես այցի. անկողինը պատրուտուն, կանթեղը պլպլուն, ո՛չ ջուր, ո՛չ կրակ, օրհացի վարտո, թշվառության մարմնացում...

20-րդ դարու մարդկային արդարություն... Փոսացած աչքերուն մեջ բուռն վրեժի և բողոքի սանձված շանթ մահահրկու:

Դալուկ շրթներ դողդոջուն մկմկուման...

«Բնությունն իմ մայր երկրի ինչքան անուշ է, հույս ծաղիկ պեսպես, աստղերը զվարթ, ա՛խ, հոս շիրիմ է, շիրիմ, արեւը ստվեր, սիրտերը մեռել, ծիծաղները սուգ: Տարե՛ք

զիս, տարե՛ք իմ երկրի դոգ»։ Վշտահար սրտի քաղձանքն է այդ լուկ. սա խուլ անկյունին մեջ լքված, արհամարհված, ու ցատում, բողոք ու ձայն խեղդված:

Տարե՛ք, հոն տարե՛ք, ուր հեծեծող սիրտերուն վշտակցող կա, արդարության ձայնը կհնչէ ու աստվածային հոգին կթափվորի, կըսեմ: Մութաղբ և ձայնդ սրտաբուխ, տերը լսած է արդեն իմ թշուառ ազգակիցս:

Մայր Աթոռի հսկան, աստվածային օրհներգու, երգեց պատարագումը հայ ցեղին, այժմ շեփորներ մարտի, երգիւր ռազմական, վեհափառ հարությունը հաղթական Հայրենիքիդ:

Սրբերգակ զանգ, դարավոր Մայր Տաճարին հայկական, վանչդ է ավետիս ազգահավաքումի Ավետյաց երկիր, Սրբության հարկ առաջնորդդ:

Աղամանդյա երազներու իրականացում... Մեռնիմ քու դաշն դողանջին հայրական:

Արաբ-Բունար

ՍԱՐԳԻՍ Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

(Ֆիլադելֆիա, «Նոր-Մայաքիա», 1954 թ., № 4)

## ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԵՆ ՇԱՀԵԿԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՒՏԱ ՀՈԳԵՇՆՈՐՀ ՀԱՅԿԱԶՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԲՐԱՀԱՄՅԱՆ

Ինչպես ծանոթ է մեր սիրելի ընթերցողներուն, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Ամենայն Հայոց երանաշնորհ Վեհափառ Կաթողիկոսի թաղման տխուր առիթով, Երուսաղեմէն Հայաստան մեկնած էին Երուսաղեմի Ս. Հակոբա միաբաններին հոգեշնորհ

Տ. Հայկազուն վարդապետ Աբրահամյան և հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ասլանյան, որոնք մոտ ամիս մը Հայաստան մտնելի հետո վերադարձան Երուսաղեմ:

Այս առիթն օգտվելով, որպես «Կոռնիկ» մանսավոր թղթակից, տեսակցություն մը